ՆԱԽԱԳԻԾ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«____» _____ 2022 թվական N _____-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 20-Ի N 342-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը ***որոշում է***.

1. Արցախի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 20-ի «Ձեռնարկատիրական վարկերի (փոխառությունների) և դրանց սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից վճարված հարկի գումարների վերադարձման կարգը սահմանելու մասին» N 342-Ն որոշմամբ սահմանված կարգի 11-րդ կետի 2-րդ ենթակետում «.» կետադրական նշանը փոխարինել «:» կետադրական նշանով և լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն.

«Ադրբեջանի Հանրապետության կողմից բռնազավթված տարածքներում գործունեություն իրականացրած Արցախի Հանրապետության կամ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ ֆինանսական կազմակերպության հետ մինչև 2020 թվականի հոկտեմբերի 1-ը կնքված վարկային պայմանագրի կորուստով պայմանավորված՝ դրա նոտարական կարգով վավերացված պատճենի ներկայացման անհնարինության դեպքում հիմք է ընդունվում Արցախի Հանրապետության կամ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ ֆինանսական կազմակերպության կողմից տրված տեղեկանքը, որում ներառվում են ձեռնարկատիրական վարկ տրամադրած Արցախի Հանրապետության կամ Հայաստանի Հանրապետության ֆինանսական

կազմակերպության անվանումը, հարկ վճարողի անվանումը (անունը, ազգանունը), վարկային պայմանագրի (այդ թվում՝ փոփոխությունների) կնքման ամսաթիվը, ամիսը, տարեթիվը, համարը, գործողության ժամկետը, վարկի տեսակը, նպատակը, արժույթը, գումարը, տարեկան փաստացի տոկոսադրույքը, սուբսիդավորվող տոկոսադրույքը, վարկի և տոկոսների մարման հաճախականությունն ու վճարման կարգը.»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ **Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**